FACT SHEET - TUBERCULOSIS

Landessanitätsdirektion für Tirol

Armenian

Ողջույն

Բարև: Ես ցանկանում եմ Ձեզ տեղեկացնել տուբերկուլյոզ հիվանդության մասին: Հիվանդությունն այլ կերպ կոչվում է նաև ՏԲ կամ պատմականորեն թոքախտ: Ամեն տարի ամբողջ աշխարհում այս հիվանդությունն ախտահարում է միլիոնավոր մարդկանց: Տարբեր երկրներում հիվանդության վարման ձևերը տարբեր են: Դա կախված է տարբեր երկրներում տուբերկուլյոզի վերաբերյալ առկա տեղեկատվությունից, նաև տուբերկուլյոզի տարածվածության աստիճանից: Բացի այդ, կան տարբերություններ մարդկային և տնտեսական ռեսուրսների միջև, որոնք հատկացված են տուբերկուլյոզի բուժմանը: Այդ պատճառով ներկայացված որոշ տեղեկատվություն կարող է չհամապատասխանել կամ չվերաբերել Ձեր իրավիճակին:
Այնուամենայնիվ,տուբերկուլյոզով բոլոր հիվանդների համար ընդհանուրն այն է, որ հիվանդությունը փորձություն է: Այն փոխում է գրեթե բոլոր այն հիվանդների կյանքը,ովքեր վարակված են: Հետևյալ տեղեկությունը կօգնի Ձեզ հասկանալ, թե ինչպես է ախտորոշվում հիվանդությունը և ինչպիսի բուժում է անհրաժեշտ: Եթե Դուք նույնպես վարակված եք, ես անկեղծ հուսով եմ շուտով կառողջանաք:

Ախտանշաններ

Օրգանիզմի բորբոքային պատասխանը արտահայտվում է տուբերկուլյոզին բնորոշ ախտանշաններով: Հիվանդությունը շատ դանդաղ է զարգանում: Այդ պատճառով ախտանշանները կարող են պահպանվել մի քանի ամիս, մինչ Դուք կորոշեք դիմել բժշկի: Բնորոշ ախտանշաններն են՝ երկարատև հազը, տենդը, գիշերային քրտնարտադրությունը և քաշի կորուստը: Որոշ մարդիկ ստիպված են լինում գիշերվա ընթացքում մի քանի անգամ փոխել իրենց սավանը՝ առատ քրտնարտադրության պատճառով: Շատ մարդկանց մոտ նկատվում է մինչև մի քանի կիլոգրամ քաշի նվազում: Դուք կարող եք օգնել Ձեր ընկերներին կամ ընտանիքի անդամներին՝ տեղեկացնելով տվյալ հիվանդությանը բնորոշ գծերի մասին: Ասացեք նրանց, որ յուրաքանչյուրն, ում մոտ նկատվում են այնպիսի բնորոշ նշաններ, ինչպիսիք են մի քանի շաբաթներ շարունակ հազալը, տենդը, գիշերային քրտնարտադրությունը և ոչ միտումնավոր քաշի անկումը, պետք է

հետազոտվի տուբերկուլյոզի վերաբերյալ:

Ապաքինման հավանականություն

Ամբողջովին զգայուն տուբերկուլյոզ ունեցող մարդկանց մոտ ապաքինման հավանականությունը գերազանց է: Այնուամենայնիվ, չափազանց կարևոր է, որ բուժման ամբողջ ընթացքում դեղերը կանոնավոր կերպով ընդունվեն: Եթե Դուք դադարեք բուժումը չափազանց վաղ կամ չընդունեք դեղերը կանոնավոր, ապա հնարավոր է հիվանդությունը կրկին գլուխ բարձրացնի, ինչն էլ առավել դժվար կլինի բուժել: Այս երկարաձգված բուժումը անհրաժեշտ է, նույնիսկ եթե մի քանի շաբաթ հետո Դուք Ձեզ առողջ եք զգում և բակտերիա չի հայտնաբերվում: Պատճառն այն է, որ Ձեր օրգանիզմում դեռևս փոքր քանակությամբ մանրէներ կան: Այս «թաքնված» բակտերիան կոչնչանա, եթե բուժումը իր ավարտին հասցվի: Ծխելը թողնելը մեծացնում է Ձեր բուժվելու հնարավորությունը: Կան տուբերկուլյոզի մի քանի տեսակներ,ինչպիսին է կենտրոնական նյարդային համակարգի տուբերկուլյոզը (ուղեղ և այն պատող թաղանթներ), որը ավելի վտանգավոր և նույնիսկ մահացու է, այդ պատճառով ժամանակին ախտորոշումը և բուժումը լավ արդյունքի հասնելու գրավականներից է:

Իմունային համակարգի վիճակը և իմունիտետը ախտահարող հիվանդությունները, ինչպիսին է մարդու իմունային անբավարարության վիրուսը (ՄԻԱՎ) կամ այլ հիվանդությունները նույնպես ազդում են տուբերկուլյոզի ելքի վրա:

Մարդիկ, ովքեր ունեն դեղակայուն տուբերկուլյոզ, ավելի դժվար են բուժվում և ապաքինվելու հավանականությունը ավելի ցածր է: Պատճառն այն է, որ բուժման տարբերակները սահմանափակ են, և բժիշկների կողմից նշանակված դեղերը ակտիվ ազդեցություն չունեն բակտերիայի վրա և առավել հավանական է, որ կողմնակի ազդեցությունը ունենան: Որոշ երկրներում հնարավոր է, որ շատ դեղեր հասանելի չլինեն ընդհանրապես: Ահա թե ինչու դեղակայուն տուբերկուլյոզի բուժման հնարավորությունները ամեն երկրում տարբեր է:

Փոխանցման կանխարգելում

Քանի դեռ միկրոբակտերիան առկա է խորխում, հազալիս հիվանդը կարող է վարակել ուրիշներին: Այդ պատճառով, հազալիս կամ փռշտալիս Դուք պետք էպակեք Ձեր բերանն ու քիթը թաշկինակով: Ձեր թաշկինակից ոչ մի դեպքում ոչ ոք չպետք է օգտվի: Ձեր օգտագործած թաշկինակը դեն գցեք, մի պահեք գրպանում: Եթե Դուք չունեք թաշկինակ, ապա հազալիս կամ փռշտալիս փակեք Ձեր քիթն ու բերանը Ձեր հագուստի թևքով կամ դաստակով, այլ ոչ թե

ձեռքերով: Շատ դեպքերում, այլ մարդկանց հետ շփվելիս վարակիչ հիվանդները պետք է կրեն պաշտպանիչ դիմակ, որը կփակի քիթն ու բերանը: Դուք պետք է կանոնավոր կերպով օդափոխեք Ձեր սենյակը: Շատ կարևոր է պարբերաբար օդափոխել սենյակը, քանի որ բակտերիան կարող է մնալ օդում մի քանի ժամ եվ վարակել ուրիշներին: Այդ պաճառով, Ձեզ հետ շփում ունեցող մարդիկ նույնպես պետք է կրեն պաշտպանիչ դիմակներ: Դա պետք է լինի հատուկ լիցենզավորված օդազտիչ, որը համապատասխանում է FFP2 կամ N95 չափանիշներին: Այս օդազտիչները լավ պաշտպանություն են ապահովում, և թույլ են տալիս ընկերներին ու բարեկամներին այցելելու ձեզ:

Մեկուսացում

Քանի դեռ Դուք վարակի աղբյուր եք հանդիսանում մյուսների համար, Ձեզ պետք է խնդրեն պահպանել որոշակի կանոններ ուրիշներին վարակի փոխանցումը կանխարգելելու համար: Որոշ երկրներում, Ձեզ չի թույլատրվի լքել հիվանդասենյակը որոշ ժամանակ: Շատ երկրներում հիվանդանոցից դուրս գրվել չի թույլատրվում, քանի դեռ միկոբակտերիան առկա է խորխում: Դուք կապահովվեք բոլոր անհրաժեշտ պարագաներով Ձեր հիվանդասենյակում: Այն երկրներում, որտեղ շատերն են տառապում տուբերկուլյոզ հիվանդությամբ, հիվանդները չեն պահվում հիվանդասենյակներում: Նրանց թույլատրվում է զբոսնել դրսում կամ ուղղարկվում են տուն: Այնուամենայնիվ, մի կանոն պարտադիր է: Եթե Դուք վարակիչ եք, Դուք և Ձեր բոլոր այցելուները պետք է կրեն պաշտպանիչ դիմակներ՝ վարակման վտանգը բացառելու համար: Այս կանոնը գործում է նաև այն ժամանակ, երբ Դուք ստիպված եք լքել սենյակը կարճ ժամանակով, օրինակ հետազոտություն անցնելու համար: Ստուգեք, որպեսզի դիմակը ամբողջովին փակի Ձեր քիթն ու բերանը: Այն պետք է պատշաճ կերպով համապատասխանի Ձեր դեմքին ՝կանխելով կողմնակի օդի ներթափանցումը: Բուժաշխատողները կարող են Ձեզ ցուցումներ տալ,ինչպես օգտագործել դիմակները, որոնք կոչվում են նաև օդազտիչներ:

Ընդհանուր տեղեկատվություն բուժման վերաբերյալ

Տուբերկուլյոզը բուժվում է հատուկ հակաբիոտիկների համակցությամբ: Շատ դեպքերում, հիվանդությունը կարող է լիարժեք բուժվել: Դժբախտաբար բուժումը տևում է մի քանի ամիս և բավական տոկունություն է պահանջում: Դուք պետք է դեղահաբեր ընդունեք մի քանի ամիս շարունակ: Հակաբիոտիկներով բուժումը սկսվում է այսպես կոչված ինտենսիվ փուլով, որը տևում է 2 կամ ավելի ամիսներ: Այս ընթացքում Դուք կբուժվեք ամենաքիչը 4 տեսակ դեղահաբերով, մինչդեռ հաջորդ ամիսների ընթացքում ավելի քիչ դեղահաբերի կարիք կլինի: Այս երկարատև բուժումը հեշտացնելու համար,

աշխարհի շատ երկրներում գոյություն ունեն այսպես կոչված ֆիքսված չափաբաժիների համակցություններ: Սա նշանակում է, որ մեկ դեղահաբը 2 կամ ավելի դեղերի համադրությունն է: Սակայն որոշ երկրներում նմանատիպ դեղորայքները հասանելի չեն, ուստի հիվանդները ստիպված են լինում օրեկան մի քանի դեղահաբ ընդունել: Չնայած,որ դա ունի իր անհարմարությունները,բայց շատ կարևոր է պարտաճանաչ և ժամանակին ընդունել դեղերը: Հակառակ դեպքում բուժումն արդյունավետ չի լինի: Բակտերիան կսկսի նորից բազմանալ և կարող է կայուն դառնալ հակաբիոտիկների նկատմամբ: Դա կառաջացնի ավելի բարդ և երկարատև բուժման անհրաժեշտություն: Վատագույն դեպքում հիվանդությունը կդառնա անբուժելի և կհանգեցնի մահվան:

Հիվանդների ներդրումը վերականգնման գործընթացում

Տուբերկուլյոզով հիվանդ ցանկացած մարդ կարող է ներդրում ունենալ իր վերականգնման գործընթացում հասարակ միջոցներով: Շատ կարևոր է չծխելը: Վերականգնման գործընթացը ավելի երկար է ընթանում ծխողների մոտ, քան չծխողների մոտ: Մաքուր օդը և արևի ճառագայթները ևս շատ օգտակար են: Դուք պետք է կանոնավոր Ձեր սենյակը օդափոխեք: Առավել կարևոր գործոն է նշանակված դեղերի պարտաճանաչ ընդունումը: Դուք պետք է լիովին հրաժարվեք թմրանյութերից և ոգելից խմիչքից: Ցանկացած կախվածություն թմրանյութերի և ոգելից խմիչքի հանդեպ կարող է վատթարեգնել Ձեր իմունային համակարգը: Եթե Դուք ինքներդ չեք կարողանում ձերբազատվել վնասակար սովորույթներից, ապա դիմեք Ձեր բժշկի օգնությանը: Սա ապահովում է, որպեսզի տուբերկուլյոզից վերականգնման գործընթացը հնարավորինս արագ ընթանա:

Name der Bezirksverwaltungsbehörde:
(name of district administrative authority)

Name des Patienten:
(name of patient)

Geburtsdatum:
(date of birth)

Datum, Unterschrift
(date, signature)

Datum, Unterschrift
(date, signature)

App with text-to-speech function for Apple iOS and Android
www.explaintb.org